ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Արդարադատության ակադեմիայի ռեկտոր,

Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Սերգեյ Առաքելյան

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱՋՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Մարիամ Գևորգի Այվազյանի «Կատարումների իրավական պահպանության հիմնախնդիրները» վերտառությամբ ԺԲ. 00.03 (Մասնավոր իրավունք) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսությունը նվիրված է կատարումների և դրանք կատարողների իրավական պաշտպանությանը հարակից իրավունքների համակարգում:

Վերջին տասնամյակներում մտավոր սեփականության իրավունքը, որպես քաղաքացիական իրավունքի հիմնարար ճյուղ, գտնվում է արագընթաց զարգացումների և խորքային վերափոխումների փուլում:

Հարակից իրավունքների համակարգում առանցքային նշանակություն ունի կատարումների և դրանք կատարողների իրավական պաշտպանությունը:

Նոր տեխնոլոգիաների, մասնավորապես՝ համացանցային և թվային հարթակների զարգացման պայմաններում առաջ են գալիս կատարումների վերարտադրությանը, հանրությանը մատչելի դարձնելուն, տարածմանը և կատարողների այլ հիմնարար իրավունքների իրացմանը վերաբերող համակարգային մարտահրավերներ, որոնց տեսական և կիրառական վերլուծության անհրաժեշտությունն էլ ավելի արդիական է դառնում հայաստանյան

իրավական համակարգում կատարողների իրավունքների պաշտպանության վերաբերյալ դատական պրակտիկայի գրեթե բացակայության պայմաններում:

Հեղինակը փորձել է մշակել գիտական այնպիսի աշխատանք, որը կարելի է համարել ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ ՀՀ-ում առկա արժեքավոր համապարփակ հետազոտություններից մեկը:

Հետազոտության նպատակը մտավոր սեփականության իրավունքի համակարգում կատարումների դերի բացահայտումն է, դրանց կարգավորման հիմնախնդիրների վերհանումը և այնպիսի մեկնաբանությունների առաջադրումը, որոնք համահունչ կլինեն գործող իրավական համակարգին և թվային դարաշրջանի իրողություններին ու առանձնահատկություններին:

Նշված նպատակին հասնելու համար հեղինակի կողմից սահմանվել են հետազոտման ենթակա այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝

- բացահայտել կատարումների դերը մտավոր սեփականության համակարգում
- ուսումնասիրել կատարումների և կատարողների իրավական պաշտպանության առանձնահատկությունները միջազգային կոնվենցիոն կարգավորումների լույսի ներքո,
- վերլուծել կատարողներին վերապահված գույքային իրավունքների համակարգը, մասնավորապես՝ կատարման ամրագրումների վերարտադրության և հանրությանը հաղորդելու իրավունքների մեկնաբանության համատեքստում,
- բացահայտել այն հիմնահարցերը, որոնք ի հայտ են գալիս կատարման ամրագրումների տարածման և առաջին վաճառքի դոկտրինի կիրառման գործընթացում՝ հաշվի առնելով թվային դարաշրջանի մարտահրավերները,
- վերլուծել կատարողների արդարացի վարձատրության և նրանց համապատասխան երաշխիքներ տրամադրելու հիմնախնդիրները,
- ներկայացնել առաջարկություններ, որոնք համահունչ կլինեն իրավակիրառ պրակտիկայի պահանջներին և միտված կլինեն վերհանված խնդիրների լուծմանը:

Ըստ հեղինակի՝ հետազոտության գիտական նորույթն արտահայտվում է նրանում, որ հայրենական իրավագիտության մեջ առաջին անգամ համակողմանի

ուսումնասիրության և վերլուծության առարկա են դարձվում կատարումների կարգավորման և կատարողների իրավական պաշտպանության հիմնախնդիրները:

Ընդ որում, նշված վերլուծությունները կատարվել են՝ ՀՀ Սահմանադրության, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաև՝ օտարերկրյա պետությունների իրավական ակտերի, մասնավորապես՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների, Միացյալ Թագավորության, ինչպես նաև՝ Եվրոպական Միության և դրա անդամ պետությունների (այդ թվում՝ Գերմանիայի, Իտալիայի, Ֆրանսիայի և այլ երկրների)՝ կատարումների իրավական կարգավորմանը վերաբերող նորմատիվ աղբյուրների հիման վրա, ինչի արդյունքում կատարվել են տեսական եզրահանգումներ և ներկայացվել օրենսդրական ու գործնական առաջարկներ:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, դրանցում ընդգրկված ութը պարագրաֆներից, եզրակացությունից և օգտագործված իրավական ակտերի, գրականության և պրակտիկայի նյութերի ցանկից:

Ատենախոսության կառուցվածքը թույլ է տալիս հեղինակին համակարգային, բազմակողմանի, ամբողջական և ճիշտ եղանակներով լուծել հետազոտության թեմայի վերաբերյալ առաջ քաշած խնդիրները:

Աշխատանքը հիմնականում գրված է գրագետ, իրավաբանական պատշաճ լեզվով:

Ատենախոսության սեղմագիրն արտացոլում է հետազոտության հիմնական դրույթները, իսկ ՀՀ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից հաստատված գիտական հրատարակությունների համար ընդունելի պարբերականներում հեղինակի հրատարակած թվով ինը հոդվածները բավարար չափով արտացոլում են ատենախոսության հիմնական արդյունքները:

Այսպիսով, ընտրված թեմայի արդիականությունը, հետազոտության օբյեկտի և առարկայի ճշտությունը, նպատակները, տեսական և գործնական խնդիրների

առաջարկվող լուծումները, ինչպես նաև՝ հետազոտության տեսական և կիրառական նշանակությունն ընդհանուր առմամբ կասկած չեն հարուցում:

Միաժամանակ, պետք է արձանագրել, որ աշխատանքի վերաբերյալ առկա են որոշակի նկատառումներ, որոնք հանգում են հետևյալին.

1. Ատենախոսության Գլուխ 1-ի ««Կատարում» և «Կատարող» հասկացությունները» վերտառությամբ 1-ին պարագրաֆում հեղինակը շատ դիպուկ անդրադարձել է արհեստական բանականության հիմնախնդրին՝ նշելով, որ այն չպետք է դիտարկվի որպես կատարող և առաջարկել «sui generis» իրավունքների շրջանակ:

Այդուհանդերձ, հաշվի առնելով խնդրի բարդությունը՝ կարծում ենք, որ աշխատանքն ավելի կշահեր, եթե հեղինակը փորձեր ձևակերպել «sui generis» իրավունքների բովանդակային կառուցվածքը՝ իրավական անորոշությունից խուսափելու համար, ինչպես նաև ավելի լայն վերլուծության ենթարկեր այն սահմանագիծը, թե որտեղ է ավարտվում արհեստական բանականությունը՝ որպես գործիք և սկսվում՝ որպես ինքնուրույն գեներացնող համակարգ:

2. Պաշտպանության ներկայացվող՝ ատենախոսության 2-րդ գլխի «Կատարողների իրավունքների միջազգային իրավական շրջանակը» վերտառությամբ պարագրաֆը նվիրված է կատարողների իրավունքների միջազգային իրավական շրջանակին, սակայն այն զետեղված է աշխատանքի 2-րդ գլխում, որտեղ, կարծում ենք, պետք է քննարկվեին բուն իրավունքների բովանդակությունն ու տեսակները:

Միջազգային իրավական հիմքերի վերլուծությունը, սովորաբար, պետք է նախորդի կոնկրետ իրավունքների քննարկմանը կամ լինի աշխատանքի 1-ին գլխում՝ որպես էվոլյուցիայի մաս, հետևաբար՝ գտնում ենք, որ աշխատանքն էլ ավելի շահեկան կլիներ, եթե միջազգային փորձն ու կոնվենցիոնալ կարգավորումները ներառված լինեին աշխատանքի 1-ին գլխում՝ չխախտելով ատենախոսության կառուցվածքային տրամաբանությունը:

3. Աշխատանքի՝ «Կատարողների իրավունքների բովանդակությունը և տեսակները. կատարողի անձնական ոչ գույքային և գույքային իրավունքները»

վերտառությամբ 2-րդ գլխի՝ «Կատարողների անձնական ոչ գույքային իրավունքները» վերտառությամբ 2-րդ պարագրաֆում ներկայացվել են կատարման հրապարակման և հետկանչի իրավունքները:

Կարծում ենք, որ հեղինակի կողմից առաջարկվող՝ կատարողի անձնական ոչ գույքային իրավունքների ընդլայնումը, մասնավորապես՝ «հետկանչի իրավունք»-ի ներմուծումը, միանգամայն համահունչ է կատարողի՝ որպես ստեղծագործող անհատի իրավունքների պաշտպանության գաղափարին:

Այնուհանդերձ, աշխատանքում առկա վերլուծությունները լիարժեք չեն թվային դարաշրջանում այս իրավունքի իրացման տեսանկյունից այն պայմաններում, երբ կատարումն արդեն հասանելի է համացանցային անսահմանափակ հարթակներում:

Ցանկալի կլիներ, որ հեղինակը քննարկեր այս իրավունքի իրացման սահմանափակումները թվային տիրույթում, որպեսզի առաջարկվող օրենսդրական փոփոխությունները չունենային զուտ հռչակագրային բնույթ, այլ լինեին կենսունակ և իրագործելի:

Այդուհանդերձ, ներկայացված նկատառումները չեն արժեզրկում ընդհանուր առմամբ հաջողված ատենախոսությունը և պայմանավորված են աշխատանքն առավել կատարյալ տեսնելու ցանկությամբ:

Հետևաբար, քննարկվող ատենախոսական հետազոտությունն արդիական, գիտական նորույթ պարունակող, տեսական և գործնական նշանակություն ունեցող, ավարտուն, հետաքրքիր, ինքնուրույն ուսումնասիրություն է, որը ներառում է տեսության, օրենսդրության, իրավակիրառ պրակտիկայի համար կարևոր նշանակություն ունեցող խնդիրների վերաբերյալ գիտականորեն հիմնավորված լուծումներ:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ Մարիամ Գևորգի Այվազյանի՝ «Կատարումների իրավական պահպանության հիմնախնդիրները» վերտառությամբ ատենախոսությունը լիովին համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում «Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգով» սահմանված պահանջներին, իսկ հեղինակն արժանի է իրավաբանական

գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման ԺԲ.00.03 «Մասնավոր իրավունք (քաղաքացիական, առևտրային, (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք)» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար:

Արդարադատության ակադեմիայի
գիտահետազոտական և ծրագրամեթոդական
աշխատանքների կազմակերպման բաժնի
գիտական խորհրդի քարտուղար՝ **Ա.Գալստյան**